ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2022 թվականի N 1666 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 797-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 797-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագրում և ամբողջ տեքստում «2015-2030» թվերը փոխարինել «2015-2035» թվերով.

2) որոշման 1-ի կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3) Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի.».

3) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ ենթակետով՝

«4) Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին 2015-2022 թվականներին կառուցված, վերակառուցված, հիմնանորոգված և շինարարական աշխատանքների ընթացքում գտնվող դպրոցների ցանկը՝ համաձայն N 4 հավելվածի:».

4) որոշման N 1 հավելվածի՝

ա. 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«8. Հայաստանի Հանրապետությունում առկա 1385 պետական հանրակրթական դպրոցների ծրագրում ներառվել է 495 դպրոց.

1) ըստ առաջնահերթությունների ընտրվել են՝

ա. բարձր սեյսմիկ խոցելիության ցուցանիշ (18) ունեցող ուսումնական մասնաշենքերով 245 դպրոց,

բ. տարբեր սեյսմիկ խոցելիության մասնաշենքեր ունեցող 232 դպրոց,

գ. պայմանավորված բնածին և տեխնածին աղետների հետևանքով դպրոցների տեխնիկական վիճակով՝ 18-ից բարձր սեյսմիկ խոցելիության ընդհանուր ցուցանիշ ունեցող 18 դպրոց: Դրանց թվին են դասվում, օրինակ՝ 3 վթարային դպրոց կամ բնածին աղետի հետևանքով անբավարար տեխնիկական վիճակ ունեցող 6 դպրոց.

2) ելնելով յուրաքանչյուր աշակերտին՝ 2.5 քառ. մետր դասասենյակային մակերես նորմատիվային պահանջից՝ տարբեր սեյսմիկ խոցելիության մասնաշենքեր ունեցող 232 դպրոցներից 72 դպրոցների աշակերտներն ապահովված են անվտանգ դասասենյակային մակերեսով.

3) 2015-2022 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության և գործընկեր կազմակերպությունների կողմից իրականացվել և իրականացվում են մի շարք դպրոցական շենքերի կառուցման, վերակառուցման ու հիմնանորոգման աշխատանքներ՝ Հայաստանի Հանրապետությունում գործող քաղաքաշինական օրենսդրական կարգավորումների և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի

(այդ թվում՝ երկրաշարժադիմացկուն շինարարության նորմերի) պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ կառավարության 19.03.2015 թ. N 596-Ն որոշման, ՀՀ քաղաքաշինության նախարարի 09.04.2014 թ. N 103-Ն, 24.03.2014 թ. N 87-Ն, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020 թ. N 102-Ն, 10.12.2020 թ. N 95-Ն հրամանների դրույթներին և նորմերին համապատասխան: Նշված դպրոցների ցանկը և աշխատանքների ֆինանսական գնահատականներն ու ֆինանսավորման աղբյուրները ներկայացված են N 4 հավելվածում.

4) արդյունքում սեյսմակայունության (երկրաշարժադիմացկունության) տեսանկյունից առավել վտանգավոր դպրոցների կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման (այդ թվում՝ վերանորոգման) ծրագրում ընդգրկվել է 368 դպրոց:»,

բ. 10-րդ կետը «ռազմավարությանը» բառից հետո լրացնել «,ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 18.11.2021 թ. N 1902-Լ որոշմամբ հաստատված՝ 2021-2026 թվականների գործունեության ծրագրի դրույթներին՝ սեյսմիկ տեսանկյունից առավել խոցելի դպրոցների կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման (այդ թվում՝ վերանորոգման) աշխատանքներն իրականացվում են հանրապետության տարածքում հանրակրթության համար բարելավված և անվտանգ միջավայրի ապահովման նպատակին և ծրագրով ամրագրված՝ մինչև 2026 թվականն առնվազն 300 դպրոցների կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման, այդ թվում՝ վերանորոգման արդյունքում ձեռքբերվող արդյունքային ցուցանիշներին» բառերով, իսկ նույն կետում «437» թիվը փոխարինել «368» թվով,

գ. 11-րդ կետում «153,398» թիվը փոխարինել «201,829» թվով, իսկ «535,802» թիվը՝ «706,401» թվով,

դ. 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«12. Ծրագրի ծախսեր. Ծրագրի ծախսերը 2015-2035 թթ. համար գնահատվել է 1,678 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, որից 223,5 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք դրամը՝ մինչև 2026 թ., իսկ 1,4545 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք դրամը՝ 2026-2035 թթ., որոնք նախատեսվում է իրականացնել Հայաստանի

Հանրապետության պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:».

5) որոշման 2-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

6) որոշման 3-րդ հավելվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ».

7) որոշումը լրացնել 4-րդ հավելվածով՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ